



Հայկ ԱՎԵՏՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի
մագիստրատուրայի ուսանող

**«ԳՐԱՎ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ
ՄԵՉՈՅԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՉԻ ԱՆՉՆԱԿԱՆ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԻՔ**

I. «Գրավ» այլընտրանքային խափանման միջոցը

1.1) «Գրավը» ՀՀ ներպետական օրենսդրության շրջանակում

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (Օրենսգիրք) 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների չեղով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անշանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության փակ մեղադրյալի գրվելուն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությանը՝ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը»: Օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է նաև, որ «կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությանը վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը:»

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ գրավը

- Կալանավորման այլընտրանքային խափանման միջոցն է
- Կիրառվում է ոչ մեծ, միջին ծանրության հանցանքների դեպքում
- Կիրառվում է դատարանի դեպո-

զիտ դրամ՝ արժեքուղթ կամ այլ արժեքներով

• Կիրառվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով

1.2) «Կալանավորում» խափանման միջոցը՝ որպես «գրավի» նախապայման

Օրենսգրքի 6-րդ հոդվածի 37-րդ մասի համաձայն՝ «կալանավորումը՝ որպես խափանման միջոց կալանքն ընդունելն է», իսկ 137-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «կալանավորումն օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անչին կալանքի փակ պահելն է», այն ըստ 134-րդ հոդվածի 2-րդ մասի՝ խափանման միջոց է: Հաջորդ հոդվածի համաձայն՝ «խափանման միջոց կարելի է կիրառել եթե քրեական գործով չեռք բերված նյութերը բավարար հիմք են փախստի ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) քաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից,

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարության մասնակցող անշանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը քաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չնեղկասանալու կամ այլ ճանապարհով,

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք,

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

4) խուսափել քրեական պատասխանարվությունից և նշանակված պատիժը կրելուց

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Խափանման այս միջոցը սահմանափակում է մարդու անձնական ազատության սահմանադրական իրավունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 27): Սահմանադրական այս իրավունքից ելնելով՝ նախ անձի անձեռնմխելիությունը դիտարկվում է որպես քրեական դատավարության սկզբունք (Օրենսգրքի 11-րդ հոդված): Երկրորդ՝ քրեական դատավարության մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտը տարածվում է նաև կալանքի՝ որպես մարդու ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի կիրառման վրա¹:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու նկատմամբ դատական վերահսկողությունը նախնական է, այն կիրառվում է միայն դատարանի թույլտվությամբ՝ դատախազի կամ քննիչի միջնորդության հիման վրա համապատասխան որոշում կայացնելու միջոցով²: Այս վերահսկողությունը կոչված է ապահովելու անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը³, նաև խոշտանգումներից զերծ մնալու անձի իրավունքը⁴:

Այսպիսով, գրավը կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ և միայն դատարանի որոշմամբ: Օրենսգրքի 137-րդ, 139-րդ և 143-րդ հոդվածներից բխում է, որ կալանավորման կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը որոշելիս դատարանն իրավունք ունի, նշանակելով գրավի գումարը, լուծել մեղադրյալին կալանքից գրավով ազատելու հնարավորության հարցը⁵:

1.3) Հանցանքի ծանրության աստիճանը որպես «գրավի» նախապայման

Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն «գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար

(ընդգծումը՝ հեղինակի) մեղադրվողին կալանքից ազատելու համար դրանի, արժեքդրերի, այլ արժեքների շնույ դատարանի ղեկավար մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն այս հարցի շուրջ իրավական դիրքորոշում է արտահայտել, մասնավորապես նշելով, որ մեղազորվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր են, և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անելու անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին⁶:

Փաստորեն, ՀՀ ներքին օրենսդրությամբ՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար գրավի կիրառումն անթույլատրելի է: Մինչդեռ, համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Սույն հոդվածի 1-ին մասի (c) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

«Կարախեռն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը



(Դատարան) արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ այն պատճառով, որ «ներպետական օրենսդրությունը ինքնաբերաբար մերժում է գրավի (որպես այլընտրանքային խափանման միջոց) կիրառման հնարավորությունը որոշակի ծանր հանցանքների կատարման դեպքում»:⁷

Այս մոտեցումը վերահաստատվել է «Փիրոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով: «Կասկածյալին կալանավորելու կամ ազատ արձակելու որոշում կայացնելիս իշխանությունները պարտավոր են այլընտրանքային միջոցներ նախատեսել դատաքննությանը նրա մասնակցության ապահովման համար: Դատարանը նախկինում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ է հայտնաբերել մի շարք գործերով, որոնցում գրավ կիրառելու միջնորդությունը ինքնաբերաբար մերժվել է ներպետական օրենսդրության ուժով: Սույն գործով դիմումատուի պահանջները մերժվել են այն հիմքով, որ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետը բացառում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում գրավով ազատելը: **Դիմումատուի գրավի կիրառման վերաբերյալ միջնորդության այդպիսի ինքնաբերաբար մերժումը, առանց նրա կալանքի կոնկրետ հանգամանքների դատական հսկողության, չի համապատասխանում 5-րդ հոդվածի 3-րդ կետի երաշխիքներին**»⁸ (ընդգծումը՝ հեղինակի):

Այսպիսով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանքներից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկելու դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպի-

սի միջոց է գրավը:

«Ըստ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Հետևաբար՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանքները ՀՀ իրավունքի բաղկացուցիչ մասն է, և **ՀՀ իրավասու դատարանները, անկախ անչին մեղազրված հանցագործության ծանրության սպիտակագույն, լիազորված են քննարկելու մեղադրյալին գրավի կիրառմամբ կալանքից ազատ արձակելու հնարավորության հարցը**»⁹ (ընդգծումը՝ հեղինակի):

1.4) «Գրավի» կիրառման մյուս նախապայմանները

Ինչպես արդեն նշվեց, Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավի կիրառման միակ նպատակը «քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գրվելն ապահովելն է»: Սակայն, Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով չեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է (ի թիվս այլնի) խոչընդոտել մինչդարական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող

մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով ...»:

Այսպես, եթե «գրավի» իրավանորմը (հոդված 143) այդ խափանման միջոցի կիրառման նախապայման է դիտում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը, ապա խափանման միջոցների հարցը կարգավորող իրավանորմը (հոդված 135), որպես խափանման միջոցների կիրառման նախապայմաններ, նախատեսում է շատ ավելի լայն շրջանակ: Ինչպես հանցանքի ծանրության աստիճանի պարագայում, այս դեպքում ևս առաջանում է իրավաչափ հարց առ այն, թե արդյո՞ք Օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսված գրավի ինստիտուտը գործում և արդյունավետ երաշխիք է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ապահովման տեսանկյունից:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ հանձնարարականի 9-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի կիրառման դեպքում դատարանը պետք է քննարկի, թե արդյոք այլընտրանքային միջոցներով կարելի է խուսափել կալանքի կիրառումից¹⁰:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ կալանքի ոչ հիմնավոր կիրառումից խուսափելու նպատակով պետք է նախատեսվի այլընտրանքային միջոցների հնարավորինս լայն շրջանակ, առավել քիչ սահմանափակումների կիրառմամբ՝ հաշվի առնելով հանցանքի կատարման մեջ կասկածվողի վարքագիծը¹¹: Նույն հանձնարարականի 7-րդ կետի համաձայն՝ անձը կարող է պահվել կալանքի տակ,

եթե փախուստի դիմելու, ծանր հանցանք կատարելու, արդարադատության իրականացմանը միջամտելու կամ հասարակական կարգի պահպանությանը լուրջ սպառնալիք ներկայացնելու վերաբերյալ ենթադրությունները չեն կարող փարատվել այլընտրանքային խափանման միջոցների կիրառմամբ¹²:

ԵՒԵԿՎ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» բանաձևի 1-ին կետի համաձայն՝ մինչդատական կալանքը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, որպես վերջին միջոց, եթե այլընտրանքային խափանման միջոցները բավարար չեն վարույթի պատշաճ ընթացքը երաշխավորելու համար¹³:

ՄԻԵԴ-ն այս հարցի շուրջ ևս ձևավորել է դատական կայուն պրակտիկա: Դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, ամրագրելով ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք, սակայն, դատական իշխանություններին չի ընձեռում ընտրության հնարավորության կամ ողջամիտ ժամկետում անձին դատաքննության կանչել, կամ վերջինիս ազատ արձակել՝ անգամ երաշխիքների պահպանմամբ: Մինչ դատապարտումն անձը համարվում է անմեղ, և 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակն անձի նախնական ազատումն է այն պահից, երբ շարունակական կալանքը դադարում է ողջամիտ լինելուց:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման հարց քննարկելիս դատարանը ստուգում է, թե որքանով է պետությունը կատարել այլընտրանքային միջոցների կիրառման պարտականությունը: Այս դրույթի պահանջների խախտում է ճանաչվել բոլոր այն դեպքերում, երբ պետությունը չի հիմնավորել, թե այլընտրանքային միջոցները, ինչպիսիք գրավը կամ ոստիկանական հսկողությունն են, չէին կարող ապահովել դատարան ան-



ծի ներկայանալը կամ քննության պատշաճ ընթացքը, կամ չի վկայակոչվել որևէ փաստարկ, որը կվկայեր փախուստի, թաքնվելու կամ այլ կերպ քննությանը խոչընդոտելու վտանգը¹⁴:

«*Լեյիլերն ընդդեմ Բեկզիայի*» գործում անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին դատարանը նշել է, որ «վերոգրյալ դրույթը խախտվել է, քանի որ չնայած դիմումատուն նախնական կալանքի փոխարինման համար առաջարկել էր բազմաթիվ այլընտրանքային խափանման միջոցներ (ներառյալ էլեկտրոնային հսկողությունը՝ պարբերաբար ոստիկանություն ներկայանալու պայմանով), իշխանություններն, այնուամենայնիվ, չէին պատասխանել դրանց և նաև չէին պատճառաբանել, թե ինչու չեն կիրառվում կալանքին փոխարինող այլընտրանքային խափանման միջոցներ»¹⁵:

«*Ալյայն ընդդեմ Թուրքիայի*» գործով Դատարանն արձանագրել է, որ «կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը»¹⁶:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնաժողովը նշել է՝ «**նախնական կալանքը պետք է լինի բացառություն և պետք է կիրառվի գրավ** (ընդգծումը՝ հեղինակի), բացի այն դեպքերից, երբ առկա է հավանականություն, որ մեղադրյալը կարող է խուսափել քննությունից, վերացնել ապացույցները կամ ազդեցություն ունենալ վկաների վրա»¹⁷:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության քրեական արդարադատության չափորոշիչներում նշվում են գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառման պահանջները.

1. Անհրաժեշտության դեպքում ներ-

կայանալ դատարան,

2. Չմիջամտել արդարադատության իրականացմանը (...)¹⁸:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ևս այս հարցի շուրջ իրավական դիրքորոշում է հայտնել, մասնավորապես նշելով, որ «գրավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության օրակ մեղադրյալի գրնվելն ապահովելու նպատակով»¹⁹: «*Գրավը կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության օրակ մեղադրյալի գրնվելն ապահովելու և մեղադրյալի կողմից դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պարտաշան ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող լինել*»²⁰:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության և Վճռաբեկ դատարանի նման որոշումներով է պայմանավորված գրավի խիստ սակավ կիրառությունը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ արձանագրված է, որ «մտահոգիչ են գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ցածր ցուցանիշները: Այսպես, կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կիրառելու միջնորդությունների մասնակի կամ ամբողջությամբ բավարարման դեպքերի և անձին կալանքից գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011 թվականից մինչև 2017 թվականներին շարունակել է տատանվել 4-7% միջակայքում: Բացի այդ, բացասական միտում է նկատվում գրավի կիրառելու միջնորդությունների և դրանք բավարարելու կամ մասնակի բավարարելու հարաբերակցության հարցում: Եթե 2011 թվականին գրավի կիրառումը բա-

վարարվել է (այդ թվում՝ մասնակի) 131 դեպքում՝ կազմելով միջնորդությունների ընդհանուր թվի 29.2%, 2012 թվականին՝ 134 դեպքում՝ միջնորդությունների ընդհանուր թվի 30.3%, 2016 թվականին՝ 161 դեպքով՝ միջնորդությունների ընդհանուր թվի 20.9%, ապա 2017 թվականին և՛ նվազել է քաղաքացիական միջնորդությունների քանակը՝ 125 միջնորդություն, և՛ դրանց տեսակարար կշիռը նվազել է մինչև 15.9%»²¹:

1.5) «Գրավն» այլ պետությունների օրենսդրություններում

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածը սահմանում է, որ ի թիվս այլնի, «գրավը կարող է կիրառվել որպես կալանավորման այլընտրանքային միջոց, եթե գրավի կիրառմամբ կարելի է հասնել կալանավորման նպատակներին»: Փաստորեն, Գերմանիայի ՔԴՕ-ն գրավի և կալանքի նպատակների միջև որևէ տարբերակում չի դնում, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ գրավը կարող է ապահովել անձի պատշաճ վարքագիծը, ապա դատարանը չպետք է կիրառի կալանք:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «գրավը կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որպես խափանման միջոց, կարող է կիրառվել դատարանի որոշմամբ (...) այլ, առավել մեղմ խափանման միջոցի կիրառման անհնարինություն դեպքում» (ընդգծումը հեղինակի): Համաձայն նույն օրենսգրքի 106-րդ հոդվածի՝ այդպիսի առավել մեղմ խափանման միջոցներից է գրավը:

Ուկրաինայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն ևս՝ կալանքը բացառիկ խափանման միջոց է, որը բացառապես կիրառվում է, եթե դատախազն ապացուցում է, որ առավել մեղմ միջոցներից որևէ մեկը (օրինակ

գրավը) չի կարող չեզոքացնել այն ռիսկերը, որոնք խափանման միջոցների կիրառման նախապայմաններն են:

Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրյալի նկատմամբ չի կարող կիրառվել կալանք, եթե ավելի մեղմ միջոցը կապահովի խափանման միջոցների կիրառման նպատակները: Այս դեպքում ևս այդպիսի խափանման միջոցներից է նույն օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված գրավը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ այս պետությունների քրեադատավարական օրենսդրությունների իրավանորմերը, **նախ**, որպես գրավի, կալանքի կամ այլ խափանման միջոցի կիրառման նախապայմաններ նախատեսում են նույն նպատակները, այսինքն՝ չեն տարբերակում կալանքի կամ այլ, այդ թվում՝ գրավի կիրառման հիմքերը, դրանք բոլոր խափանման միջոցների դեպքում նույնն են: **Երկրորդ** կարևոր հանգամանքն այն է, որ վերոգրյալ քրեադատավարական օրենսդրություններում առանցքային նշանակություն է տրված համաչափության սկզբունքին: Համաձայն այս սկզբունքի, որն, ի դեպ, մեզ է հասել դեռևս հռոմեական իրավունքից (de minimis non curat praetor/lex²²) բոլոր այն դեպքերում, երբ իրավաչափ նպատակին կարելի է հասնել մեղմ միջոցով, չի կարելի գործածել ավելի կոշտ, խիստ միջոց: Այսինքն՝ կալանքը՝ որպես խափանման միջոց, կարելի է կիրառել միայն այն դեպքում, երբ մյուս, այլընտրանքային խափանման միջոցներն ունակ չեն լուծելու այն խնդիրները, որոնք հենց կալանքի կիրառման նախապայման են: Կալանքը՝ որպես վերջին միջոց, պետք է կիրառվի բացառապես այն դեպքում, երբ դատարանը կհանգի եզրակացության առ այն, որ միայն կալանքի կիրառմամբ է հնարավոր ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը քրեական գործի շրջանակներում:



II. Եզրակացություն

1. Գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը չի կարող պայմանավորված լինել ենթադրաբար կատարված հանցանքի ծանրության աստիճանից: Ամեն կոնկրետ դեպքում դատարանը պետք է որոշի, թե արդյոք գրավն արդյունավետ միջոց է հետապնդվող նպատակներն իրագործելու համար:

2. Կալանքը՝ որպես խափանման միջոց, ենթադրաբար հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն որպես բացառիկ և վերջին միջոց (last resort), երբ մնացած բոլոր խափանման միջոցները, այդ թվում՝ գրավը, չեն կարող ապահովել հետապնդվող նպատակների իրագործումը:

3. Գրավը ոչ միայն դատարանի առջև ներկայանալու և քննությունից չխուսափելու, այլև արդարադատության իրականացմանը չմիջամտելու, այսինքն՝ քննությանը չխոչընդոտելու երաշխիք է:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը՝ որպես գրավի կիրառման միակ պայման է դիտարկում քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը: Փաստորեն, բոլոր այն դեպքերում, երբ դատարանը եզրահանգի, որ գրավը կարող է լինել ենթադրաբար հանցանք կատարած անձի կողմից

քրեական գործի վարույթը չխոչընդոտելու գործուն երաշխիք, այնուամենայնիվ, կաշկանդված լինելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ, չի կարող կիրառել գրավ, և փաստորեն անձը պետք է մնա կալանքի տակ՝ ազատությունից կամայական գրկվածի կարգավիճակում: Սա է պատճառը, որ ինչպես արդեն նշվեց, դատարանների մի մասը նմանատիպ դեպքերում կիրառում է կալանքը՝ որպես խափանման միջոց, անձի անձնական ազատության իրավունքի՝ ձևական առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տառին համապատասխան, բայց ոչ իրավաչափ սահմանափակմամբ:

Այսպիսով՝ անշի անհնական ազատության երաշխավորման միջազգային պրակտիկայի, սահմանադրաիրավական երաշխիքների և գործող օրենսդրական կարգավորումների համադրումից բխում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասն այնպիսի մեկնաբանման և կիրառման պայմաններում, որ գրավի ընդրությունը սահմանափակվում է միայն վարույթն իրականացնող մարմնին ներկայանալն ապահովելու նպատակով, և չի կարող կիրառվել ծանր կամ առանհնապես ծանր հանցանքների դեպքում վրանգում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անշի ազատության հիմնարար իրավունքը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

1 Գ. Ղազինյան և ուրիշ., «ՀՀ քրեական դատավարություն, հատուկ մաս» (չորրորդ հրատարակություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2019 թ., էջ 338:
2 Տե՛ս՝ նույն տեղում:
3 Kurt v. Turkey գործով 25.05.1998 թ. վճիռը, գանգատ թիվ 24276/94, կետ 123:
4 Aksoy v. Turkey գործով 18.12.1996 թ. վճիռը, գանգատ թիվ 21987/93, կետ 76:
5 Ա. Ղամբարյան և ուրիշ., «ՀՀ քրեական դատավարություն, ՄԱՍ 1» (երկրորդ լրամշակված հրատարակություն), Երևան,

«ԼՈՒՍԱԲԱՅ հրատ.», 2017 թ., էջ 532:
6 ՀՀ Վճռաբեկ դատարանի 15.02.2013 թ. թիվ ԿԳ-1/0062/06/12 որոշման 13-րդ կետ:
7 Կաբալեռոն ընդդեմ Սիացյալ Թագավորության (CABALLERO v. THE UNITED KINGDOM) գործով 2000 թ. փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 32819/96, կետեր 18, 34:
8 Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (PIRUZYAN v. ARMENIA) գործով 2012 թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, կետեր 103-104:

- ⁹ ՀՀ Վճռաբեկ դատարանի 13.07.2007 թ. թիվ ՎԼԲ-115/07 որոշման 3-րդ կետ:
- ¹⁰ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ 1980 թ. Հունիսի 27-ի թիվ R (80) 11 հանձնարարականը:
- ¹¹ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ 2006թ. սեպտեմբերի 27-ի թիվ 13 հանձնարարականը:
- ¹² Տես՝ նույն տեղում:
- ¹³ ԵԽԽՎ՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» 2015 թ. հոկտեմբերի 1-ի թիվ 2077 բանաձևը:
- ¹⁴ Յաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի (JABLONSKI V. POLAND) գործով 2000 թ. դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 33492/96, կետեր 82-83:
- ¹⁵ Լելիերն ընդդեմ Բելգիայի (LELIEVRE v. BELGIUM) գործով 2007 թ. նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 11287/03, կետ 66:
- ¹⁶ Սահին Ալպայն ընդդեմ Թուրքիայի (ŞAHİN ALPAY v. TURKEY) գործով 2018 թ. մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, կետ 181:
- ¹⁷ Communication No. 526/1993, M. and B. Hill v. Spain (Views adopted on 2 April 1997), UN doc. GAOR, A/52/40 (vol. II), p. 17, para. 12.3.
- ¹⁸ ABA Criminal Justice Standards On Pretrial Release, Standard 10-1.2.
- ¹⁹ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014թ.դեկտեմբերի 31-ի թիվ ԵԱԶԳ/0056/06/14 որոշման 16-րդ կետ:
- ²⁰ Տես՝ նույն որոշման 19-րդ կետը:
- ²¹ 2017 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf>.
- ²² Bryan A. Garner, Black's Law Dictionary, Ninth Edition, Thomson Reuters, 2009, p. 496.



RESUME - РЕЗЮМЕ

THE ALTERNATIVE PREVENTIVE MEASURE “BAIL” AS A GUARANTY OF A RIGHT OF PERSONAL LIBERTY

H. Avetyan

Student of Law Faculty (LL.M) of American University of Armenia

The article, first of all, discusses the alternative preventive measure “bail” under Armenian legislation and interpretations of Armenian courts. Then it discusses legislative prerequisites of bail, particularly the detention, the strictness of an alleged crime, and what is the most important, that these prerequisites for detention and its alternative measure bail are not meet each other, they are different. The author, by referring the legal doctrines and legislations of diverse states shows that the detention should be the last resort and in all cases, a court has to consider a possibility of application of bail as an effective guaranty of a right of personal liberty of a person. For that purpose, the criminal procedure code of RA to undergo some changes.

Keywords: Liberty, bail, detention, court.

АЛЬТЕРНАТИВНАЯ МЕРА ПРЕСЕЧЕНИЯ «ЗАЛОГ» КАК ГАРАНТИЯ ПРАВА ЛИЧНОЙ СВОБОДЫ

А. Аветян

*Студент магистратуры юридического факультет
Американский университет Армении*

В данной статье обсуждается альтернативная мера пресечения «залог» в контексте Законодательства РА и ее интерпретация армянскими судами. Затем рассматриваются предусловия залога, в частности, заключение под стражу, степень тяжести предполагаемого преступления, и, что самое главное, обсуждается тот вопрос, что данные предусловия для заключения под стражу и залога не совпадают. Автор, ссылаясь на правовую доктрину и законодательства разных стран, показывает, что мера пресечения «заключение под стражу» должна применяться в последнюю очередь, и что каждый раз суд должен рассматривать возможность применения залога в качестве эффективной гарантии права личной свободы. Для достижения данной цели Уголовно-процессуальный кодекс Армении нуждается в обновлении.

Ключевые слова: свобода, залог, заключение под стражу, суд.

Բանալի բառեր - ազատություն, գրավ, կալանք, դաշտարան:

Հ. Ավետյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի մագիստրատուրայի ուսանող, էլ. փոստ՝ haykavetyan8@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 02.10.2019, տրվել է գրախոսության՝ 02.10.2019, երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Դիլբանդյանի կողմից, ընդունվել է ստագրության՝ 24.10.2019